PRESS RELEASE. August 24, 2015

ՀԱՅՓ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ՝ ցուցահանդեսի բացում և միջոցառումների շաբաթ
Ցուցահանդես՝ “The Scale of Life” օգոս 28 – սեպ 7, 2015
Ժամանակակից արվեստի հավաքական ցուցահանդես
Երևան Ռեզիդենս, 6 հարկ, 186/11 Վերին անտառային փողոց, Երևան
Բաց է ամեն օր՝ 16:00 – 21:00
Բացում՝ ուրբ, օգոս 28, 19:00- 22:00
Արվեստ, կերակուր և երաժշտություն ՀԱՅՓ-ում. զգացողությունների ամբողջական փորձ
DZOOK Փոփ-ափ ռեստորանի պրեմիերա՝ երեք բաժին ձկնային կերակուրների ճաշակում ԿԱՐԱՍ տեղական գինու տեսականու հետ
Ներկայացում Ժոզեֆ Զաքայանի կողմից (DJ & Projection)
Միջոցառումների շաբաթ՝ կիր, 30/8 ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ The ScREenery կողմից
Չոր, 2/9 ԶՐՈՒՅՑ (Հնաբանությունն ու հեթանոս Հայաստանը) Արմեն Մարտիրոսյան
Ուրբ, 4/9 Թատերական ներկայացում, Արամ Ատամյան
Երկ, 7/9 Պարային ներկայացում BA-AR-DIA կողմից

Բացման արարողություն
Մենք ուրախ ենք հայտարարել, որ ՀԱՅՓ պատկերասրահը ներկայանալու է DZOOK Հայաստանում առաջին Փոփ-ափ ռեստորանի հետ համատեղ: Նախագիծը ոգեշնչվում է ձկնից՝ պտղաբերության և արարչության հեթանոսական խորհրդանշից: Վեց ժամանակակից արվեստագետներ կմեկնաբանեն այս խորհրդանիշը նկարչության, լուսանկարչության, ինստալացիայի և տեխնիկական արվեստի միջոցով հավաքական ցուցահանդեսի տեսքով: Հյուրընկալվելով ՀԱՅՓ-ի կողմից DZOOK-ը առաջին անգամ հանդես կգա յուրօրինակ ճաշացանկով՝ Հայաստանում ձկան պատրաստման տեխնիկաների տարածման նպատակով՝ դեռևս օգտագործելով տեղական մթերքներ: Նրանք մատուցելու են երեք բաժին հում և կիսահում տեղական իշխան (իշխան և կարմրախայտ): Գինին կլինի ԿԱՐԱՍ: Լինելու է էլեկտրոնային կենդանի երաժշտական ներկայացում միջազգային կատարող Ժոզեֆ Զաքարյանի կողմից: Միջոցառման համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել տոմսեր մեկ անձի համար 4,500 դրամով հետևյալ հասցեներից՝ Green Bean, Artbridge, Calumet, El Café և El Sky Bar: Այն շահույթ չհետապնդող միջոցառում է:

Ի՞նչ է Փոփ-ափ պատկերասրահը:

Փոփ-ափ պատկերասրահը շարժական պատկերասրահ է, որն անսպասելի վայրերում՝ խանութների ազատ ցուցափեխկերին, վարձույթով տրվող կառույցներում կամ լքված գործարաններում հիմնում է ժամանակավոր ցուցահանդեսներ: ՀԱՅՓ փոփ-ափ պատկերասրահի նպատակն է հասարակությանը ցույց տալ այս տարածքների հնարավորությունները և արվեստի կարևորությունը, որը մեզ օգնում է տեսնել և վերաիմաստավորել մեր շրջակայքը՝ ավելի լավ ապագայի տեսլական ունենալու համար:

Արվեստ
“The Scale of Life”, Օգոս 28-Սեպ 7, 2015
Սա ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահի թվով արդեն երրորդ ցուցահանդեսն է: “The Scale of Life” բառախաղ է, որը վերաբերվում է ձկան արտաքին կաշվին, ինչպես նաև կյանքի բազմազանությանը: «Վիշապը» կամ ջրային դրակոնը հեթանոսական Հայաստանում պտղաբերության և արարության խորհրդանիշ էր: Այս ցուցադրության ժամանակ տեսողական արվեստ և այն ներկայացնող արվեստագետները իրենց յուրօրինակ ժամանակակից ձևաչափով կմեկնաբանեն այս առասպելական ջրային արարածներին: Մասնակցող արվեստագետներից է ԼՈՒՍԿԱՆ, ով Երևանում ծնված և Սան Ֆրանցիսկոյում մեծացած գրաֆիթի և վիդեո արվեստագետ է: ԼՈՒՍԿԱՆ համագործակցում է ARLOOPA աշխարհում հայտնի տեղական տեխ ընկերության հետ, որն առաջին անգամ Հայաստանում բերում է “Augmented Reality” տեխնոլոգիան դեպի արվեստ: Մասնակիցներից է նաև Գյումրիից արվեստաբան Հրաչյա Վարդանյանը, ով ցուցահանդեսներով հանդես է եկել ԱՄՆ-ում, Իռլանդիայում, Ավստիայում, Իսպանիայում և Ֆրանսիայում: Ներկայումս մասնակից է Պեկին միջազգային արվեստի բիենալեի “Dreamscapes” հայկական հատուկ ցուցահանդեսում(սեպ – հոկ 2015):

Արվեստագետներ՝ Մելիսա Ֆինկենբիներ, ԼՈՒՍԿԱ, Ֆելիքս Ռոմանոս, Մուշեղ Մխիթարյան, Ավետիք Վարդանյան, Հրաչյա Վարդանյան:

Մեր հովանավորները և գործընկերներն են՝ Yerevan Residence, El Life Style, KARAS Wines, The ScREenery, ARLOOPA:

ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահը արվեստագետների, արվեստը գնահատողների և հատկապես հետաքրքրասերների լայն հանդիսատեսի համար է:

ՀԱՅՓ Կոնտակտային տվյալներ՝
Աննա Կ. Գարգարյան, հիմնադիր, կառավարիչ եւ գեղարվեստական ղեկավար
Info.hayp@gmail.com | www.haypopup.wordpress.com
ՀԷՌ՝ +374(0)99.741.626
Facebook: www.facebook.com/haypopup
Twitter: www.twitter.com/haypopup